

Յյուններով: Այս մասում տեղավորված են 1512—1850 ժամանակաշրջանում տպագրված գրքերը: Երկրորդ ստորաբաժանումն ավելի ընդարձակ ու բազմակողմանի է: Այստեղ ըստ բնագավառների փոքր ենթաբաժիններով դասավորված են 1850—1920 ժամանակաշրջանի հրատարակությունները:



Հակոբ Մեղապարս

Հայ ժողովրդի նման ցրված ու աստանդանկան կյանք է ունեցել նաև հայ տպագրությունը: Տարբեր ժամանակներում, աշխարհի զանազան անկյուններում հայ ժողովուրդն ստեղծել է տպարաններ, հրատարակել գրքեր ու պարբերականներ, որոնք ծառայել են որպես զենք նրա ազգային ինքնուրույնության ու պահպանման համար մղված պայքարում:

Մեր առաջ այստեղ բացվում է 141 քաղաքների հայկական տպագրական օջախների շղթան: Նրա մեջ է Վենետիկը, հայկական տպագրության առաջին օրրանը:

Առևտրական գրքեկրով այստեղ մեկնեց Զուղայեցի հայ վաճառական Հակոբը, որը ձեռնամուխ եղավ առաջին տպագրությանը և 1512 թվին հրատարակեց հայ առաջին տպագիր գիրքը՝ «Պարզատուժաբը»: Փոքրագիր, 118 էջից բաղկացած մի գիրք է դա, շարված միատեսակ բոլորագիր ուղղահայաց տառերով. գրքի էջերն ունեն գլխազարդեր

և ծաղկատառ զբնագրեր: Բացի պարզատուժաբից, գրքում կան ենթաբաժիններ՝ «Կաղանդացույց», «Նշանացույց», «Նրազացույց», «Մենդեան տղայույց» և մարմնահանդաց: Մինչև այժմ այդ գրքից հայտաբերված է վեց օրինակ, որոնցից երկուսը Հայաստանում (Հանրային գրադարան և Մատենադարան), երկուսը Վիեննայի Մխիթարյանների գրադարանում, մեկը Երուսաղեմի հայոց վանքի գրադարանում և մեկն էլ Մյունխենի սեպտական մատենադարանում: 1512—1513 թ. թ. նույն Հակոբը հրատարակում է հինգ անուն գիրք, որոնք նույնպես ցուցադրված են այստեղ: Ուշագրավ է 5-րդ գիրքը, որը «Տաղարան» է կոչվում: Այստեղ առաջին անգամ տպագրված են նմուշներ մեր միջնադարյան առղերգուների՝ Մ. Նազաշի, Ֆրիկի, Թլուրանցու տաղերից:

Հակոբ Զուղայեցուց հետո Վենետիկում հայ տպագրության գործի շարունակողը հանդիսացավ Աբգար Թոքատեցին, որը քաղաքական նպատակներով Հռոմ էր եկել 1563 թվին: Թոքատեցին ձուլում է երկու տեսակ հայկական տառ և տպագրում մի շարք գրքեր: Թոքատեցին 1565 թ. տպագրում է հայերեն առաջին օրացույցը՝ «Նստունայինթուր տումարի զեղեցիկ և պիտանի»:

Թոքատեցու տպագրած գրքերից այստեղ ցուցադրված են «Փոքր քերականութիւն կամ այբբենարան», «Պատարագամատուց», «Տոնացույց», «Մաշտոց» և այլն:


1565—1686 թ. Վենետիկի հայկական տպագրության պատմության մեջ խոշոր դեր են խաղացել տպագրիչներ Հով. Տերզերեցին, Հովհ. Անկյունեցին, Խոջա Նահապետն իր որդիներով և ուրիշները: Այս շջանի հրատարակություններից ցուցադրված են Ն. Շնորհաբու «Յիսուս որդի» գիրքը, որը մեր մատենագիրների մեջ առանձին գրքով հրատարակված առաջին տպագիր գիրքն է: Նշանավոր է նաև «Ճաշոց» մեծածավալ գիրքը, որի տպագրությունը մի քանի տարի է տևել:

18-րդ դարի սկզբներին Վենետիկում հիմնադրվում է Մխիթարյան միաբանությունը՝ Մխիթար Աբբայի կողմից: Հայ տպագրության պատմության մեջ Մխիթարյան միաբանության գործունեությունը աննախընթաց վերելքի շրջան էր: Մինչև սեփական տպարան ստեղծելը՝ Մխիթարյանները Վենետիկյան տպարաններում չույս են ընծայում մի շարք նշանավոր գրքեր: Այս գրքերից ցուցադրված են Մխիթար Աբբայի «Աստուածաշունչը», «Հայկազեան բառարանը», Չամչյանի «Հայոց պատմութեան» հա-

տորները, նարեկացու «Մատան սղերդութեան» առաջին հրատարակությունը, որը անվանված է «Բանք պոթից», փարպեցու «Հայոց պատմութեան» առաջին ապագրությունը, Մխիթար Գոշի «Առակների» 1-ին տպագրությունը և այլն:

1789 թ. Մխիթարյանները հիմնում են իրենց սեփական տպարանը: Իրենց գործունեության ընթացքում նրանք լույս են ընծայել 1.000 անունից ավելի գրքեր՝ բազմապիսի բովանդակությամբ: Այստեղ են լույս տեսել Մխիթարյան բազմավաստակ գիտնականների՝ Ալիշանի, Ավգերյանի, Բագրատունու, Ղազիրյանի, Ինճիճյանի աշխատությունները, Թովմաճյանի, Բժշկյանի և այլոց կլասիկ թարգմանությունները: Մխիթարյան տպարանումն է լույս տեսել «Բազմավէպ» ամսագիրը, որը սկսվել է հրատարակվել 1843 թվից և շարունակվում է հրատարակվել մինչև օրս: Առանձնապես հիշատակելի է Մխիթարյան գիտնականների քրտնաջան աշխատանքը 5-րդ դարում հունարենից հայերեն թարգմանված մի քանի արժեքավոր ձեռագրերի վրա, որոնց հոնարեն բնագրերը ժամանակի ընթացքում ոչընչացել են, իսկ հայերեն թարգմանության տեքստերը փոխարինում են բնագրերին:


Մխիթարյանները մանրազննին ուսումնասիրությամբ հրատարակեցին դրանք: Այդ գրքերից ցուցադրված են՝ Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրանք» («Քրոնիկոն»),



Ճանիկ Արամյան

Փիլոն Եբրայեցու «Յաղագս նախախնամութեան» ու «Յաղագս կենդանեաց» և Սեվերյանոս Եմեսացու «Ճառք»-ը: Հիշյալ աշխատությունների յատկերենի թարգմանեց բազմաշխատ գիտնական Մ. Ավգերյանը և գիտությունը տեղյակ դարձրեց դրանց մասին:

Հայ տպագրության երկրորդ նշանավոր օջախը Կոստանդնուպոլիսն է, թե տպագրված գրքերի ու պարբերականների քանակի և թե հայ պոլիգրաֆիայի զարգացման տեսակետից: Այս քաղաքումն էր հիմնել հայկական առաջին տպարանը 1567 թ. Աբգար դպիր Թոքատեցին: Այստեղ են գործել աարբեր ժամանակամիջոցներում նշանավոր տպագրիչներ՝ Գրիգոր Մարգրվանցին, Հովհ. Մյուհենտիսյանը, Պողոս Արապյանը, Ճանիկ Արամյանը: Վերջիններս զարգացրել և բազմացրել են հայ տպագրական տառաձևերը: Պոլսահայ հին հրատարակություններից ցուցահանդեսում ուշադրության արժանի են՝ 1706 թ. տպագրված «Յայսմատուք» ստվարածավալ գիրքը, Հակոբ պատրիարք Նալյանի «Մեկնութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ»-ն, Ագաթանգեղոսի, Փալրստոս Բուզանդի, Եղիշեի առաջին տպագրությունները, Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց»-ը, Բաղդասար դպիրի՝ «Պարզաբանութիւն քերականութեան»-ը և ուրիշ շատ գրքեր:



Հալ. Մյունենտիսյան

Հայ տպագրության պատմության մեջ նր-
 շանավոր տեղ ունի նաև Հոլանդիայի Ա-
 մստերդամ քաղաքը, որտեղ Հայաստանից
 գաղթած փոքրաթիվ հայերի մի խումբ հիմ-
 նել է «Ս. Էջմիածին» և «Ս. Սարգիս զորա-
 վար» տպարանները — 1660 թ.: Այստեղ են
 գործել հանրահռչակ Ոսկան Երևանցին
 (Ղլիճենց), Թովմաս եպիսկ. Նուրիջանյանը
 և Վանանդեցի եղբայրները:

Ամստերդամի հրատարակություններից
 ցուցադրված են հայերեն առաջին տպագիր
 «Աստուածաշունչ»-ը, որ 1666 թ. տպագրել
 է Ոսկան Երևանցին, միաժամանակ խմբա-
 գրել, համեմատել յառիներենի հետ և կազ-
 մել հատուկ անուանների ցանկ, «Շարակ-
 նոց»-ը, որը առաջին հայ տպագիր գիրքն է
 հայկական խազերով, Խորենացու Հայոց
 պատմության առաջին տպագրությունը
 (1695 թ.), Սկրոդերի «Գանձ Արամեան
 լեզուի» լեզվաբանական ուսումնասիրու-
 թյունը, Առաքել Գավրիժեցու Պատմության
 առաջին տպագրությունը, որի ժամանակ
 հեղինակը դեռ Կենդանի էր, և տեսավ իր
 տպագրված գիրքը: Ամստերդամում է տպա-
 գրվել առաջին հայ տպագիր քարտեզը՝
 «Համատարած աշխարհացոյց»-ը, որը պատ-
 րաստել է Բ. Վանանդեցին, Բ. Նուրիջան-
 յանի աշխատակցությամբ:

Հայ կուլտուրայի օջախներից մեկն է եղել
 և Նոր-Ջուլան: Այստեղ Խաչատուր Կեսա-
 րացու քանքերով կազմակերպված տպարա-




Ոսկան վարդապետ Երևանցի

նում 1641 թվին լույս է տեսնում «Հարանց
 դաղանիք» մեծածավալ գիրքը:

Հայ բնաշխարհում առաջին հայկական
 տպարանը հիմնադրվել է Էջմիածնում Սի-
 մեոն կաթողիկոսի օրով: Տպարանն ունեցել
 է նաև թղթի գործարան: Գևորգ Դ. կաթողի-
 կոսի օրով ավելի ընդարձակվում և բարե-
 կարգվում է տպարանը: Էջմիածնի տպարա-
 նում տպագրած գրքերից ցուցադրված են
 Մխիթար Գոշի «Իստաստանագիրք»-ը, Սի-
 մեոն կաթողիկոսի «Ջամբո»-ը, «Ջայ-
 նագրեալ շառական»-ը և ուրիշ շատ գրքեր:

Հայ տպագրության գործի խոշոր օջախ է
 եղել նաև Հնդկաստանը: Կալկաթայի Հայ-
 կական ճեմարանի և Արարատյան ընկերու-
 թյան հրատարակություններից ցուցադրված
 են Մ. Թաղիադյանի երկերը, «Ազգասէր»
 շաբաթաթերթը, իսկ Մադրաս քաղաքում Շ.
 Շահամիրյանի տպագրություններից՝ «Այր-
 բենարան», «Որոգայթ փառաց», «Յորդորակ»
 գրքերը, 1794 թ. Հարություն քահանա Շմա-
 վոնյանի կողմից լույս ընծայված առաջին
 հայ պարբերականը՝ «Ազգարար»-ը:

Հայ տպագրության պատմության մեջ ոչ
 պակաս կարևոր դեռ են խաղացել Թրիեստի
 և Վիեննայի Մխիթարյան տպարանները,
 աչուհետև Երուսաղեմի, Ջմլուռնիայի, Ս.
 Պետրբուրգի, Մոսկվայի, Թիֆլիսի, Նոր-
 Նախիջևանի, Աստրախանի, Երևանի, Թեո-
 դոսիայի, Վանի հայկական տպարանները:



Առաջին տպագրւ Աստուածաշունչը

Յուցահանդեսում առանձին-առանձին ցուցադրված են այդ տպարաններում լույս տեսած գրքերը (հինքուրուչն և թարգմանական), ժողովածուները, պարբերականներն ու ամսագրերը:

Երևանում առաջին տպարանը կազմակերպել է Գ. Զաքարյանը 1876 թվին. այս տպարանում էր տպագրվում Հայաստանում առաջին հայկական թերթը՝ «Պսակ»-ը:

Յուցահանդեսի երկրորդ ստորաբաժանման մեջ՝ 1850 թվից մինչև 1920 թ. ժամանակաշրջանում հրատարակված գրքերը ցուցադրված են ըստ բնագավառների: «Պատմական» բնագավառում ցուցադրված են ըստ ամսական գիտնական Դ. Ալիշանի պատմական տեղագրական երկերը: Այստեղ են՝ «Այրարատ», «Շիրակ», «Միտական» փառակազմ հատորները, նույնպես և «Հայապատում», «Տեղեկագիր Հայոց մեծաց», «Աշխարհագրութիւն» թանգարժեք գիտական դործերը: Թարգմանական պատմական գրականութեան շարքում կան Ռուլենի «Հռովմէական պատմութիւն»-ը, Թուկիդիտեսի, Սալուստիոսի, Հուլիոս Կեսարի, Տակիտոսի պատմական երկերը, իսկ հայոց պատմութեան գծով՝ Լեոյի «Հայոց պատմութիւնը», Գարագաշյանի «Քննական պատմութիւնը», Գյուլատ քահ. Աղանյանցի «Դրանք», Օրմանյանի «Ազգապատումը» և այլ գրքեր:

Հոյակապ շքեղություն է ներկայացնում «Հայ պատմիչներ» շարքը: Այստեղ ցուցադրված են Ոսկեդարի հայ պատմիչներից մինչև 16—17-րդ դարի պատմիչների երկերը: Այստեղ են Ագաթանգեղոսը, Խորենացին, Փարպեցին, Եղիշեն, Եղնիկը, Սեբեոսը, Դրասխանակերտցին, Կաղանկատուացին, Ասողիկը, Թովմա Արծրունին, Ուխտանես հայիսկոպոսը և շատ տարիների պատմություններն ու ժամանակագրությունները:

«Բառարաններ» շարքում ցուցադրված են մեր նասորդների չգերազանցված աշխատանքները բառարանագրության ասպարեզում: Այստեղ են դրված Հ. Ավգերյանի «Անգղերէն-հայերէն», Մ. Զախչախյանի՝ «Հայ-իտալական», Ն. Բյուզանդացու՝ «Ֆրանսահայ», Տրուզյանի՝ «Պարսկահայ»— Դաղբաշյանի՝ «Ռուսերէնից հայերէն և Հայերէնից-ռուսերէն» բառարանները:

Այս թուղթի պսակն է կազմում «Նոր բառերը հայկազեան լեզուի» պատկանելի 2 հատորը, որ կազմել են Գ. Ավետիքյանը, Խ. Սյուրմեյանը և Մ. Ավգերյանը:

«Հայագիտական» բաժնում ցուցադրված են գիտավորական Վիեննայի Մխիթարյանների «ազգային մատենադարան»—մատենա-

շարքի գրքերը: Այստեղ կան Ա. Այսերյանի, Ն. Ակիսյանի, Հ. Տաշյանի, Հովնանյանի, Մենեիշյանի, Գալեմբարյանի, Աճառյանի, Ն. Բյուզանդացու, Բ. Սարգսյանի, Կ. Կոստանյանի լեզվաբանական, բանասիրական և պատմական ուսումնասիրությունները, եվրոպական գիտնականներ Կարիտերի, Հյուբերմանի, Պետերսոնի թարգմանված ուսումնասիրությունները հայերի և հայերենի վերաբերյալ: Հայ տպագիր գրքի պատմության դժուր ցուցադրված են Զարրհանալյանի, Դադիկյանի, Թեոդիկի, Լեոնյանի աշխատությունները:

Հետաքրքրական է հատկապես «Հայկական հարցին» վերաբերվող բաժինը: Այստեղ կարելի է գտնել գրականություն թուրքահայ կոտորածների և ընդհանրապես «Հայկական հարց»-ի վերաբերյալ: Յուցադրված է նաև 1915 թ. հայկական կոտորածների քարտեզը: Նույնպիսի հետաքրքրություն է ներկայացնում հասարակական-քաղաքական, մանկավարժական, արվեստի, բժշկական, փիլիսոփայական բաժիններում ցուցադրված հարուստ գրականությունը:

Ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականության բաժինը ցուցահանդեսի ամենահետաքրքրական մասերից մեկն է: Դիտողը տեսնում է ողջ հայ գրականությունը՝ Հ. Քուչակ, Սալաթ-Նովա, Ալիշան, Նալբանդյան, Բաֆֆի, Շիրվանզադե, Թումանյան, Սունդուկյան, Պարոնյան, Դուրյան, Զոհրապ, Վարուժան... մինչև գուղագիրներ՝ Զավախեցի, Ճուղուրյան, Բաշալյան, Թլկատենցի և հայ աշուղներ:

Ոչ պակաս բեղմնավոր է եղել և անցյալի՝ մեր թարգմանական գեղարվեստական գրականությունը: Բնագրերից թարգմանվել են Հոմերոս, Վերգիլիոս, Տասոս, Շեքսպիր, Շիլլեր, Գյոթե, Տոլստոյ, Խալամ, Ֆրիդուսի, Հայնե, Լամարտին, Դյումա, Հյուգո, Լաֆոնտեն և շատ այլ հեղինակներ:

Յուցահանդեսի մի այլ բաժնում ցուցադրված է արտասահմանյան հայ գրականությունը: Այստեղ փարեյի է գտնել Նյու-Յորքի, Երուսաղեմի, Վիեննայի, Վենետիկի, Գահիրեի, Բեյրութի, Պուսի, Փարիզի, Բոստոնի, Աթենքի հրատարակությունները:

Ուշագրավ են արտասահմանյան հայ բանաստեղծների՝ Կ. Միտալի, Հ. Գոյումճյանի, Զիթունիի, Հ. Անտոնյանի, Վարժապետյանի, Կարագյուլյանի, Համբարձումյանի, Լեոն Մեսրոպի գործերը. գիտական ուսումնասիրություններից ուշադրության արժանի են Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանի պատմական և բանասիրական ուսումնասիր-

րուծյունները, Եղիշե Արք. Գուրյանի, Կ. Բաս-
մաճյանի, Ռ. Աբրահամյանի և այլոց ու-
սումնասիրութիւնները:

Հայաստանի սովետիզացիան հայ ժողո-
վրդի առաջ գրականութեան ու կուլտուրայի
զարգացման նոր հեռանկարներ բացեց:
Նախկին Երևանի հետամնաց տպարանների
և աննշան հրատարակութիւնների փոխա-
րեն Սովետական Հայաստանի մայրաքաղա-
քը այժմ դարձել է գրականութեան ու կուլ-
տուրայի խոշորագույն օջախներից մեկը:

Ներկայումս Սովետական Հայաստանում
գործում են ավելի քան 50 տպարաններ:
Սովետական իշխանութեան 26 տարիների
ընթացքում Հայաստանում լույս է տեսել
ավելի քան 10 հազար անուն գիրք՝ մի
քանի միլիոն տիրաժող: Բոլոր գրադարան-
ների գրքային ֆոնդը 1946 թվին հասել է
2.600.000-ի:

Ներկայումս կանոնավոր գործող գրադա-
րանների թիվը հասնում է 2.215-ի:

Սովետահայ տպագիր գիրքը դարձել է
մասսաների ուսուցման ու դաստիարակման
հզորագույն միջոցը: Ցուցահանդեսի երկ-
րորդ խոշոր բաժինը ցուցադրում է հենց
սովետահայ տպագիր հարուստ գրականու-
թյունը: Այստեղ ցուցադրված են քաղաքա-
կան գրականութունը, մարքսիզմ-լենինիզմի
կյասիկների երկերի հայերեն թարգմանու-
թյունները, մասսայական հրատարակու-
թյունները: «Արվեստ» բաժնում ցուցադր-
ված են երաժշտութեան, նկարչութեան, ճար-
տարապետութեան վերաբերող սովետահայ
ողջ հրատարակութիւնները:

Չափազանց մեծ աշխատանք է կատա-
րել Հայաստանի Պետհրատը հայ կլասիկ-
ների վերահրատարակման ասպարեզում:
Իրանցից ցուցադրված են Աբովյանի, Նալ-
բանդյանի, Սունդուկյանի, Բաֆֆու, Վարու-
ժանի, Մեծարեցիի, Պարոնյանի, Մուրացա-
նի, Օտյանի, Թումանյանի, Իսահակյանի,
Շիրվանզադեի, Տերյանի, Հովհաննիսյանի,
Փափազյանի և այլոց երկերը: Ուշագրավ է
նաև «Սասունցի Դավիթ» հոբելյանական
հրատարակութիւնը և «Հայ գրականութեան
ընտիր էջեր» անթոլոգիայի հրատարակու-
թյունը:

Մեծ տեղ են գրավում սովետահայ գրող-
ների ու բանաստեղծների ստեղծագործու-
թյունները: Ցուցադրված են Դեմիրճյանի,
Արազու, Զորյանի, Զարենցիի, Ն. Զարյանի,
Գ. Սարյանի, Ա. Վշտունու, Սիրասի, Հով.
Շիրազի և շատ ուրիշների գործերը:

Սովետական շրջանի թարգմանական գրա-
կանութեան բաժնում ցուցադրված են Պուշ-

կինի, Լերմոնտովի, Տոլստոյի, Գրիբոյեդովի,
Չերնիշևսկու, Կրիլովի, Շևչենկոյի, Մայ-
կովսկու, Ցոլումանովի գործերի թարգմանու-
թյունները: Եվրոպական գրականութեանից՝
Հյուգոյի, Սերվանտեսի, Բալզակի, Չլոբերի-
Ռոմեն Ռոլանի, Ժյուլ Վեռնի, Զեյ Լոնդոնի,
Լոնգֆելլիի, Բարբյուսի և ուրիշ այլ հեղի-
նակների գործերի նոր ու արժեքավոր
թարգմանութիւնները: Շատ մեծ աշխա-
տանքներ են կատարված հայագիտութեան
բնագավառում: Այս բաժնում ցուցադրված
են ակադեմիկոսներ՝ Մանանդյանի, Աբեղ-
յանի, Աճառյանի, Ղափանցյանի, Տերտեր-
յանի, պրոֆեսորներ՝ Խ. Սամվելյանի, Պիա-
րովսկու, Ա. Աբրահամյանի, Ա. Ղարիբյանի
պատմական, լեզվաբանական և բանասի-
րական ուսումնասիրութիւններն ու աշխա-
տութիւնները:

«Քառաբաններ» բաժնում ցուցադրված է
Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ի 7
հատորները, Ստ. Մալխասյանի «Հայերեն
բացատրական բառարան»-ի 4 հատորները,
ինչպես և Հայաստանում հրատարակված
«Ռուս-հայերեն նոր բառարան»-ը և բազ-
մաթիվ տերմինաբանական բառարաններ:

Հայ տպագիր գրքի պատմութեան ցուցա-
հանդեսը հարուստ է բազմաթիվ հետա-
քրքրական իլյուստրացիաներով, որոնք
պատկերում են մեր հին տպագրական
օջախները, միաբանութիւնները, վանքերը,
նշանավոր տպագրիչներին ու գրականութեան
գործիչներին, գրողներին ու բանաստեղծնե-
րին:

Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան Պե-
տական Հանրային գրադարանի դիրեկցիան
ու ողջ կոլեկտիվը պատվով ու շնորհքով են
կատարել այս բարդ ստեղծագործական
աշխատանքը:

Ցուցահանդեսը մեծ հետաքրքրութիւն է
առաջացրել Երևանի ազգաբնակչութեան
մեջ: Բազմահազար այցելուները մեծ գոհու-
նակութեամբ են դիտում հայ գրքի այդ
հոյակապ ցուցահանդեսը:

Ցուցահանդեսն այցելած մեծանուն բա-
նաստեղծ Ավետիք Իսահակյանը իր տպա-
վորութիւններով մեջ գրել է՝ «Հայ գիրքը
մեր փառքն է, դարերի մեջ մեզ անուցող հա-
ցը»: Ակ. Հր. Աճառյանը ցուցահանդեսը
դիտելուց հետո գրել է՝ «Դարեր ամբողջ ան-
ցան իմ առջևից: Փառք մեր նախնայաց,
որոնք այնքան տառապանքով այնքան ար-
դյունք են տվել: Պատիվ նրանց, որ զնա-
հատեցին նրանց աշխատանքը, կաղմակեր-
պելով այս գեղեցիկ ցուցահանդեսը:

Յանկալի է, որ նա մշտական թանգա-
րանի վերածվեր: